

Հասնեց տի Բողոքիսանը» (1907), «Անանդան և մահը» (1908) և այլն)։

Ծիշտ կերպով նշելով Տերյանի պոետական արժանավորությունները՝ ստեղծագործության սկզբնական շրջանում, Մուրադյանը գրում է. «Եսկ հետազայում՝ հեղափոխական վերելքի տարիներին՝ արձագանքելով ժողովրդական մասսաների կենաց և մահու գոտեմարտին, Տերյանի ստեղծագործությունը նվաճեց լայն լսարան, իսկ հեղինակը՝ Տերյանը գրավեց իր պատմավոր տեղը հայ պոեզիայի Պատնասում» (94)։ Ծիշտ է այն միտքը, որ Տերյանը ժամանակի ընթացքում ավելի ամուր թելերով է կապվել կյանքին, բայց չի կարելի համաձայնել գրականագետի հետ, թե Տերյանը հեղափոխության վերելքի տարիներին իր տեղը գրավեց հայ պոեզիայի Պատնասում։ «Ամենադի անուրջների» հրատարակությունը միանգամից այդ պատվին արժանացրեց նրան։

Մուրադյանը անդրադառնում է նաև Գեմիրճյանի գրականագիտական հոդվածներին այն չափով, որքանով գրանք վերաբերում են գրո-

ղի գեղարվեստական ժառանգությանը։ Սակայն լավ կլիներ, որ Գեմիրճյանը նրանք նաև իրեն գրականության և արվեստի տեսարան, որը շատ հետաքրքիր որոնումներ է կատարել ոչ միայն սեփական ստեղծագործության, այլև բնդհանրապես հայ գրականության և արվեստի կենդան հարցերը լուծելու բնագավառում։ Նա գրել է շատ հոդվածներ, որոնք անշափ ուսանելի կոդմեր ունեն և քննության առարկա դառնալու ղեպքում գրողի գեղագիտական նուրբ բժրոնումները ավելի կամրողացնենին։

Վերջացնելու Այս աշխատությունը Գեմիրճյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության առաջին ծավալուն և ամրողական փորձն է, որը գրված է սիրով և խնամքով։ Վիճելի կետերը միայն ավելացնում են հետաքրքրությունը նրա նկատմամբ։ «Գերենիկ Գեմիրճյան» աշխատությունը հայ գրականագիտության վերջին շրջանի արժեքավոր գործերից մեկն է, որտեղ տրված է մեծ գրողի ստեղծագործության ճշմարտացի և արժանի գնահատականը։

Լ. ԱՍՄԱՐՅԱՆ

«Հայ աշուղներ», կազմեց ՀԱՍՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ, Երևան, 1961, 466 էջ, զինո 1 ու։

Հայկական ՍՍԽ ԴԱ Դրականության ինստիտուտը ձևակերպել է հայ աշուղների ժառանգության եռահատոր ժողովածուի հրատարակության դործը։ Գրախոսվող աշխատությունը, որ ներկայացնում է XVII—XVIII դդ. հայ աշուղների ստեղծագործությունը, այդ ժողովածուի անդրանիկ հատորն է։

Հատորն ընդգրկում է Նոր-Ջուղայի, Թիֆլիսի և Թուրքահայ բազմաթիվ աշուղների մեզ հայտնի և անհայտ երգերը։ Հասկանալի է, որ այդ երգերի մի մասը միայն կարող էր ծանոթ լինել ընթերցողներին՝ տպագրված լինելով անցյալի գսնազան պարբերականների և երգարանների մեջ։ Նրկարատե պրպտումների շնորհիվ Հ. Սահակյանին հաջողվել է արխիվային նյութերի, գրչագիր դավթարների ու հազվագյուտ հրատարակությունների նյութերի հիման վրա կազմել և ընթերցող լայն շրջաններին ներկայացնել հայ աշուղների երգերի անդրանիկ գիտական ժողովածուն՝ ընդարձակ ներածականով, ծանոթագրություններով և բանասիրական ուշագրավ դիտողություններով։

«Ներածության» մեջ տրված է աշուղական գրականության ծագման և ձևավորման ուրվագիծը, շոշափված են աշուղական երգի և պրո-

ֆեսիոնալ պոեզիայի փոխհարաբերության և փոխազդեցության խնդիրները, գնահատված են XVII—XVIII դդ. հայ աշուղական գրականության արժեքները։ Թեև ներածության մեջ աշուղական երգերի վերլուծությունները տրված են բոտ մոտիվների, որն ինչ-որ չափով ջլատում է նյութի ընկալման ամրողականությունը, այնուհանդերձ, հեղինակը կարողացել է ընտրագրել ժողովածուի մեջ տեղ գտած գրեթե բոլոր աշուղների ստեղծագործությունը, անդրադառնալով նաև այն հարցին, թե ի՞նչ պայմաններում է սկզբնավորվել հայ աշուղական գրականությունը՝ նախ հայկական գաղութներում և ապա բուն Հայաստանում։ Այդ կերպ էլ նա Նոր-Ջուղայի, Թիֆլիսի, Աստրախանի և Թուրքիայի զանազան բաղարների աշուղական դպրոցների գոյությունը կապել է արարական ու մոնղոլական արշավանքների հաջորդող իրանա-թուրքական տիրապետության շրջանում հայ ժողովրդի տեղահանության և արտագաղթի հետ, ցույց տվել թե ինչու հենց այդ ժամանակ և հենց այդ գաղութներում պետք է սկիզբ առնեն աշուղական պոեզիան։

Անցնելով աշուղների և նրանց երգերի վերլուծությանը, Հ. Սահակյանը նախ կանգ է առ-

նում Յուրբական և պարսկական բռնության դեմ հայ ժողովրդի արտահայտած բողոքն ու դրժագոթությունը, ինչպես նաև Բսպահանի մոտ ստեղծված հայարնակ Նոր-Ջուղա քաղաքի բնակիչների ծանր կյանքը պատկերող երգերի վրա: Այդ տեսակետից ուշագրավ են հատկապես «Խաղ Բաղեր օղլու վասն ավերածոյ Ջուղայու», «Թիւն Ճէկ» և «Խաղ Բաղեր օղլու վասն նեղութեան Ջուղայու» երգերի վերլուծությունները: Պարզ, անպաճույճ լեզվով, գրում է Հ. Սահակյանը, և ժողովրդի խոսքին հատուկ տեսանելի պատկերներով Բաղեր օղլին կենդանագրում է Ջուղա հայերի կրած տառապանքները: Սակայն Բաղեր օղլու պատմական բովանդակությունը ունեցող երգերի մեջ հեղինակն ամենից ավելի բարձր է գնահատում Նադիր շահի մահվան առթիվ գրած դաստանը: Իրանի մի այլ շահի՝ Մահմադ շահանի կատարած վայրագություններն մասին է պատմում աշուղ Ղուլ Հովհաննեսն իր «Փոքր թիւն թամամ» դաստանում:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում բնական արհավիրքների, համաճարակների, դրժ-րախտ պատահարների առթիվ հորինված երգերը, ինչպես նաև այն գործերը, որոնք «բնական սնաղարտությամբ» կամ քննադատարար նկարագրում են այս կամ այն քաղաքը, բնակավայրն ու երկիրը: Այդ տեսակետից բնորոշ են Սաֆար, Ճերեան, Օհան, Բաղեր օղլիների և Ղուլ Արզունի դաստանները: Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ պատմական դաստանների այդ ժանրը հետագայում որդեգրում և լայնորեն կիրառում են նաև XIX դարի նշանավոր առնչներ Ագրար Աղամր, Մալիֆր, Քյանհանը, Գյուլթի-Նավեն և շատ ուրիշներ: Պատմական սյուժե ունեցող բանաստեղծություններից հետո, նկատում է հեղինակը, մեծ բաժին են կազմում բարոյա-խրատական, ուսուցողական բնույթի երգերը: Աշուղական գրականության սկզբնական շրջանում բարոյա-խրատական երգերի մեջ շեշտ է նկատվում են քրիստոնեական բարոյախոսության տարրերը: Հետագայում խրատական երգերը գնալով ավելի աշխարհականանում են և գործնական-դաստիարակչական նշանակություն ձևոր բերում:

Այնուհետև, անդրադառնալով XVII—XVIII դդ. աշուղական գրականության մեջ առանձին շարք կազմող այլաբանական բանաստեղծություններին և ապաշխարության մոտիվները պարունակող երգերին, Հ. Սահակյանը կանգ է առնում աշուղական գրականության մեջ լայն տարածում գտած սիրային երգերի վրա: Պետք է ասել, որ ամենից ավելի հաջող են հենց այդ երգերի, առանձնապես սիրային երկախոսությունների և լիրիկական ստանալիքների վերլուծությունները: Աշուղական սիրային երգերը,

նկատում է հեղինակը, ունեն ճանաչողական որոշակի արժեք, հարուստ և հետաքրքրական տեղեկություններ են պարունակում ժողովրդի կենցաղի, ապրելաձևի և աշխարհայեցության մանրամասների վերաբերյալ:

Ներածության վերջում հեղինակն անդրադառնում է Նաղաշ Հովնաթանից ուսած աշուղների երգիծական-կենցաղային երգերին, հետաքրքիր դիտողություններ անում նաև «հակադրություններին» և այսպես կոչված ինքնակենսագրական երգերի (ջափաթամաների) վերաբերյալ: Հեղինակը հիշատակով չանք արժանի աշխատանք է կատարել նաև տեքստերի բնորոշության, նրանց տարրերակների բաղադրման, թերի և պակասավոր տողերի, բառերի լրացման, լեզվական քերականական և մինչև իսկ տաղաչափական բնույթի շտկումներ կատարելու ուղղությամբ: Ժողովածուն ունի օգտագործված աղբյուրների, ձեռագրերի նկարագրության, պատմական անունների ու տեղանունների բացատրության ցանկեր և ծավալուն բառարան:

Մի բանի խոսք հատորում ընդգրկված նյութերի մասին: «Երկու խոսքից» իմանում ենք, որ հատորում զետեղված երգերը քաղված են պարբերական մամուլում, աշուղական ժողովածուներում ու երգարաններում, ինչպես և գրագիրը դավթարներում և այլուր պահպանված տպագիր և անտպ գրություններից: Այդ իմաստով, պետք չէ՝ արդյոք առավել զգուշավորություն հանդես բերել այն աղբյուրների նկատմամբ, որոնցից օգտվել է հեղինակը: Այդ աղբյուրներից են բանահավաք Ե. Թարվերդյանի 1937 և 1957 թթ. հրատարակած գուսանա-աշուղական երգերի երկու ժողովածուները: Մեր մամուլում մեկից ավելի անգամներ է խոսվել բանահավաք Գ. Թարվերդյանի մատակարարած նյութերի անարժանահավատության մասին. նա հաճախ առանձին աշուղների երգեր վերագրել է ուրիշների, ձեռագրել է տասնյակ տեքստեր, «մշակել և նմրադրել» առանձին աշուղների երգեր, աղավաղել նրանց վերաբերյալ կենսագրական տեղեկությունները: Հ. Սահակյանը, տեղյակ լինելով այս ամենին, իր ծանոթագրությունների մեջ երբեմն որոշ վերապահությամբ է խոսում Թարվերդյանից առած նյութերի մասին: Բայց և այնպես, Թարվերդյանի կազմած ժողովածուները իրեն սկզբնաղբյուր բնորոշելով, գանապան աշուղների 16 երգեր նա այնտեղից նույնությամբ տեղափոխել է ներկա հատորի մեջ: Մինչդեռ մեզ թվում է, որ դրանց մի զգալի մասը այն աշուղներին է, որոնց անվամբ այդ երգերն առաջին անգամ հրատարակել է Ե. Թարվերդյանը: Մեր խոսքն այստեղ ոչ թե մեկ, այլ հինգ երգերի մասին է: Դրանք են՝ Ղուլ Էդալի «Ասի՛ ախշի, ասավ՝ համմէ» (էջ 82),

Ղուլ Արզունի «Անցավոր աշխար» (103), Ամիր Օղլու «Ոչխարն ու գելը» (152), Սալմաստեցի Ղուլ Հարությունի «Սանդղոյի թող թափի խնտ շող իրեսիդ» (266), «էտ ի՞նչ լանգյառով կրելես» (267): Թարվերդյանի ժողովածուններում նշված չեն այդ երգերի սկզբնաղբյուրները: Բավական է մատնանշել թեկուզ միայն լեզվի խնդիրը, և թյուրիմացութիւնը ակնհայտ կդառնա: Բովար չէ նկատել, որ վերոհիշյալ երգերի լեզուն (ոճա-քերականական առումով) զգալապես տարբերվում է այն աշուղների լեզվից, որոնց վերագրված են այդ երգերը: Որինակ, ուր Ղուլ էսադի՝ Նոր-Ջուղայի այս բարբառը

Բու կշտիս նստել աս լալման,
Ես քո յէշխիցն ամ խալման,
Խօսման ամ, ջուղար չէս տալման,
Դէմ բռնամ աս նուռն, ի՛նչ անեմ:

Եվ ուր սա.

Ասի՝ ախշի,— ասավ համմէ,
Ասի՝ քաղցր շաքար ծամմէ,
Ի՛նչ կլինի թողնես գամ մէ,
Ես ձեր տանը, և ձեր տունը:

Կամ՝ ուր Ղուլ Արզունի այսպիսի լեզուն.

Սրտովս մեղայ՝ հեռ, նախանձ ամ պախլէ,
Յաւուր դատաստանիցն ես չեմ վախել, և
այլն.

և ուր.

Անցավոր աշխարհ, բաներդ տեսնելով,
Ուրախ սիրտս տխուր մալուլ ա դարձել.
Տղամարդը չընկնի նամարդի մութատաջ,
Որ համաշա շասի՝ ինձ զուլ ա դարձել:

Այդպես էլ Ամիր Օղլու ջուղայական բարբառի կողքին հանկարծ՝ Արարատյան բարբառով գրրված «Ոչխարն ու գելը»:

Կամ վերցնենք մի ուրիշ փաստ: Հայտնի է, որ Սալմաստեցի Ղուլ Հարությունը հայերեն չի հորինել, բայց Թարվերդյանը, 1937 թ. հրատարակած իր ժողովածուի մեջ գետեղել է նրա շուրս լեզուներով գրած մի երգը՝ «էս էլ մի էլենց զաման ա» վերնագրով: Այդ երգի ծանոթագրութեան մեջ կարդում ենք. «Այստեղ ասված մի տուն հայերեն երգը Ղուլ Հարությունի առաջ միակ հայերենն է: Նա հայերեն չի իմացել ու ասել է բաղառապես աղբյւրքաւերեն (ընդգծումը մերն է — Շ. Գ.): Շատ հետո մի ուրիշ աշուղ է յույս բնկել, որն իրեն անվանել է Ղուլ-Հարություն և հայերեն երգեր է հորինել,— դա իսկական Սալմաստեցի Ղուլ Հարությունը չէ՞: 1957 թ. նույն Թարվերդյանը «հայերեն չիմացող և բաղառապես աղբյւրքաւերեն ասող» Սալմաստեցի Ղուլ Հարությունի անվամբ նորից հրատարակում է հայերեն երգեր, որոնք նույնութեամբ տեղ են գտել Հ. Սահակյանի կազմած ներկա հատորի մեջ:

Հատորում ընդգրկված նյութերի մեջ կան նաև այլ կարգի թերութիւններ: Ինչպես հայտնի է, աշուղական երգերը ունեն տաղաչափական ինքնատիպ և յուրօրինակ կանոններ, որոնց խրատումը պարտադիր է: Յավոր սրտի, բերվող հատորում երբեմն նկատվում են դրանց անտեսման հետևանքով առաջացած աղավաղումներ: Այդ կանոններից մեկի համաձայն աշուղական երգի առաջին տան երկրորդ տողի վերջին կամ նախավերջին բառը, ինչպես և նույն և հետագա տների վերջին կամ նախավերջին բառերը պարտադիր կերպով հանգավորվում են: Վերցնենք Ղուլ էսադի «Հողից, ջրից, կրակ, քամուց» երգը: Այդ երգի առաջին տունն այսպես է.

Հողից, ջրից, կրակ, քամուց
Քեզի տէրն դու ա ստեղծել,
Աղամի զարմի նման չես միթէ
Քեզի նուր ա ստեղծել:

Բացի նրանից, որ այս բառյակի 2-րդ տողի ընդգծված բառը «դուր ա» պետք է պարտադիր կերպով հանգավորվի 4-րդ տողի համապատասխան բառի հետ՝ «նուր ա», այնուհետև բոլոր տների 4-րդ տողերի համապատասխան բառերն էլ պետք է պարտադիր կերպով հանգավորվեն առաջին տան 2-րդ տողի նույնահանգ բառի հետ: Ուրեմն, պետք է լինի, և այդպես էլ է.

Քեզի նուր ա ստեղծել...
Բարդ ու բոլոր ա ստեղծել...
Ոլոր մոլոր ա ստեղծել...
Քեզ թագավոր ա ստեղծել...

Բայց, ահա, վերջին տան մեջ համապատասխան բառը փոխանակ «որ»-ով վերջանալու, վերջանում է «են»-ով՝ «Քեզ հրեղեն ա ստեղծել»: Աշուղական երգի կանոնների համաձայն այդպիսի բան երբևէ չէր կարող լինել: Աղավաղումն ակնհայտ է: Իսկ այդ կարգի աղավաղումները (որոնց թիվն այստեղ երկու տասնյակից ավելի է) ոչ մի եզր չեն կարող ունենալ տպագրական վրիպակների հետ:

Աշուղական երգերի մեջ կա մի տեսակը, ըստ որում շատ մեծ շափերով տարածված, որ կոչ-

1 «Հայ աշուղներ», կազմեց Գ. Թարվերդյան, Երևան, 1937, էջ 42:

